Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի շնորհավորական ուղերձն Անկախության օրվա առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ, սրտանց շնորհավորում եմ համայն հայությանը Անկախության օրվա առթիվ:

Անկախության հռչակումը հայ ժողովրդի կյանքում պատմական մեծագույն ձեռքբերումներից է, հայ մարդու ինքնության յուրակերպ դրսևորում, ազատ ապրելու և ստեղծագործելու բարձրագույն մղում:

Ամբողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը միշտ էլ խորապես գիտակցել է, որ ամենամեծ արժեքն Անկախությունն է: Անկախության ձգտումը մեզ ուղեկցել է պատմության ամբողջ ընթացքում՝ պայքարի ոգեկոչելով հազարավոր երիտասարդների:

Խոնարհվում ենք Արցախյան առաջին, Քառօրյա, 44-օրյա պատերազների, հայրենքի պաշտպանությանը զինվորագրված հազարավոր նվիրյալ հայորդիների, մարտնչած հերոսների առջև: Հարյուրավոր հայորդիներ նահատակվեցին՝ հանուն Հայաստանի, նրա անկախության, մեզանից յուրաքանչյուրի անհատական ու բոլորիս հավաքական արժանապատվության:

Նրանց անձնազոհության արդյունքն է անկախ Հայաստանը: Հազար փա՛ռք մեր հերոս նահատակներին:

Անկախության տոնը յուրաքանչյուրիս համար առիթ է խորհելու պետության անցած ուղու, հաջողությունների ու փորձությունների, ձեռքբերումների ու մարտահրավերների մասին:

Յուրաքանչյուրս պարտավոր ենք մեր ամենօրյա աշխատանքով ամրապնդել և ուժեղացնել Հայաստանը, նրա անկախությունը:

Անկախության օրվա առթիվ՝ մեր երկրին մաղթում եմ խաղաղություն և ձեռքբերումներ, տնտեսության զարգացում ու բարգավաճում:

Աստված պահապա՛ն բոլորիս: